

դրանց համադասարանում՝ նոր պայմաններում ստեղծել են արմերավոր հուշարձաններ, որոնք հարող են համեմատվել համաշխարհային մշակույթի լավագույն հուշարձանների հետ: Բնչպես ցույց է տալիս Մանկավանդին, իրենց նոր քահավայրերը բերելով հայ ազգային մշակույթը, այն զարգացնելով նոր պայմաններում, հայերը եպաստել են չե՛հ և ուկրաինական ժողովուրդների մշակույթի զարգացմանը (էջ 85, 86): Վերջապես, հայերի մեծ ծառայությունը պիտի համարել և այն, որ իրենց մշակույթի հետ միասին երանք Լեհաստան էին բերել այն ժողովուրդների մշակութային տարրերը, որոնց մեջ երանք նախկինում բնակություն էին հաստատել, այդ թվում նաև մասնագետական Արևելքի ժողովուրդների մշակույթի տարրերը (էջ 35, 100 և այլն):

Գրախոսվող աշխատության արժանիքներից է և այն, որ այստեղ գնտեղված են բազմաթիվ դժագոհեր ու հայ մշակույթի հուշարձանների լուսանկարներ: Գրքում եղած 88 լուսանկարներից 33-ը անմիջականորեն վերաբերում են հայ-

կական քննատիկային: Գրանք հիմնականում վերաբերում են Լվովի հայկական տաճարի նոր-տարապետությանը, քաղաքացիական շինությունների նախազարգերին, ինչպես նաև առօրյա ժամանակի պատկերներին ու մայր տաճարի հայկական ձևադրերի համարածուրի մանրանկարներին:

Պիտի ցավել սակայն, որ մենագրության հեղինակը իր հետազոտությունը սահմանափակել է միայն Լվովով, որ հիվանդությունը երան հնարավորություն չի տվել լայնորեն լուսարանել ու ճշգրտել իր իսկ բարձրադաս հարցերը, առաջ բաշխած գրություններին տալ առավել լիակատար փաստարկումներ:

Ամփոփելով նշենք, որ Տադևուշ Մանկավանդին «Արևելքի Լեհաստանի ղեկավարվածական մշակույթի մեղ» մենագրությունը արժեքավոր ներդրում է քննարկվող թեմայի և մասնավորապես Լեհաստանի տերիտորիայում եղած հայկական բնակավայրերի մշակութային ժառանգության ուսումնասիրման գործում:

Ձ. ԳԱՍՏԱՆ

„*Studia et acta orientalia*“, II, 1959. Bucarest, Meridiens Editions, 1960, pp. 320 (Societe des Sciences Historiques et Philologiques de la R.P.R.—Section d'Etudes Orientales).

Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի պատմական և բանասիրական գիտությունների թեմերության Արևելյան ուսումնասիրությունների բաժանմունքի նախագահ Միհայիլ Դուրոգուի խմբագրությամբ լույս է տեսել այդ բաժանմունքի „*Studia et Acta Orientalia*“ շանդեսի երկրորդ համարը (առաջինը լույս է տեսել 1958 թ.):

Շանդեսի ուսումնասիրություններ, հոդվածներ և տեղեկություններ, ինչպես նաև հաղորդումներ և ընդհանրաֆիական ծանոթություններ բաժիններում հանդիպում են հայագիտական նյութերի Այսպես, Մ. Ալեքսանդրեսկու-Դերսկան տպագրել է «Այգիների Ումուր Բեկի արշավանքը Դանուբի գետաբերանում (1337 կամ 1338 թ.)» պատմական հոդվածը (էջ 3—23), որտեղ հեղինակը հաստատում է այն տխուր փաստը, թե այդ շրջանը հունա-հռոմեական հնագույն ժամանակներից մինչև օսմանյան իշխանությունը տնտեսական տեսական շահագործման է ենթարկվել:

Ռումինացի հայագետ, հանգուցյալ պրոֆ. Վլադ Բընդյանուս հանդեսում հրատարակել է Ռարինդրանաթ Տադուր, նրա քաղաքական հայացքները և գործունեությունը (էջ 25—59)

ընդարձակ ուսումնասիրությունը, ինչպես նաև երեք գրախոսականներ (էջ 262—266):

Հետաքրքիր է պրոֆեսոր Ի. Բլաշկովիչի (Պրագա) «Չեխոսլովակյան արևելագիտական դպրոցի խնդիրները, կազմակերպումը և գործունեությունը» հոդվածը (էջ 61—69), որտեղ ծանոթանում ենք շեխ արևելագետների կատարած աշխատանքներին՝ Մերձավոր, Միջին և Հեռավոր արևելքի ժողովուրդների լեզուների, մշակույթի և պատմության ուսումնասիրությունների բնագավառում: Չեխոսլովակիայում արևելագիտության գրադվում են երկու գիտական հիմնարկներ՝ Կարոլի համալսարանի բանասիրական ֆակուլտետը և Չեխոսլովակիայի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը: Հեղինակը գրում է, թե 1951 թ. Կարոլի համալսարանի բանասիրական ֆակուլտետում կազմակերպվել է հայերեն և վրացերեն լեզուների ուսումնասիրության մի առանձին բաժանմունք, որտեղ դասավանդում է գոկտոր Յարոմիր Նզլիչկան: Նզլիչկան հեղինակն է հայ և վրաց գրականության վերաբերյալ մի շարք աշխատությունների: Չեխոսլովակյան գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Մերձավոր և Մի-

օին արևելյան թափանցանքի գիտնականները խախտված, արարագիտական, պարսկագիտական և թուրքագիտական հարցերի հետ հավասարապես ուսումնասիրում են նաև հայերենն ու կովկասյան լեզուները:

Արամ Ֆրենկյանին և պատկանում «Գիլգամեշ գյուցաղներգությունը և Նոմերոսյան պոեմները» խորագրով հոդվածը (Լջ 89—105): Սումերա-բարելոնյան գրական գործերի մեջ ամենահուշակալորը Գիլգամեշի գյուցաղներգությունն է: Շատ պատմաբաններ հանդել են այն եզրակացություն, որ այս գյուցաղներգությունը որոշ ազդեցություն է ունեցել հոմերոսյան գյուցաղներգությունների, մասնավորապես Ոդիսականի վրա: Հոգվածագիրը մաս առ մաս և հանգամանորեն համեմատում է ասորա-բարելոնյան և հունական վերահիշյալ գյուցաղներգությունները: Գիլգամեշի գյուցաղներգությունն մեծ ժողովրդայնություն է վայելել անտիկ շրջանում Մերձավոր արևելքում, այն թարգմանված է եղել բազմաթիվ լեզուներով և շրջել է հեթիթների երկրում, Սիրիայում և Պաղեստինում: Ա. Ֆրենկյանը մանրակրկիտ վերլուծության է ենթարկում բարելոնյան գյուցաղներգությունը գլխավորապես գրական և պատմական առումներով:

Հանդեսի խմբագիր Միհայիլ Գուրոգլուն այս համարում հրապարակել է «Ռումինական արխիվներում, գրադարաններում և հավաքածուներում գտնվող ունեցող արևելյան վավերագրական նյութերի կարևորությունը» ակնարկը (Լջ 107—118): Հեղինակը ընդհանուր գաղափար է տալիս Ռումինիայում առկա արևելյան հիշատակարանային հարուստ ու բազմազան նյութերի մասին, նյութեր, որոնք հետաքրքրական են Միջին արևելքի ժողովուրդների պատմության, ինչպես նաև թուրք-ռումինական դարավոր հարաբերությունների ուսումնասիրության համար: Արևելյան զանազան լեզուներով գրված այդ նյութերը խիստ շահեկան են նաև բանասիրական հետազոտությունների համար: Արարերեն, թուրքերեն, պարսկերեն, երբայերեն, ինչպես նաև Հեռավոր արևելքի ժողովուրդների լեզուներով գրված ձեռագրերի հետ հիշատակվում են նաև հայերեն ձեռագրեր, ինչպես նաև «հայկական արվեստի վերաբերյալ իրեր, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում, եթե նկատի ունենանք այն իրողությունը, որ հայկական արվեստը ազդեցություն է գործել մեր երկրի (Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի—Հ. Մ.) արվեստի վրա»,— գրում է հեղինակը:

Հետաքրքրական է նաև Ռեյխմանի «Արևելյան (խալմական) ուսումնասիրությունները Հեհաստանում» հոդվածը (Լջ 161—187): Այստեղ հեղինակը մանրամասն տեղեկություններ է

տալիս Հեհաստանի և արևելյան երկրների հարաբերությունների, առևտրական կապերի, մշակութային կյանքի մասին՝ հին և միջին դարերից մինչև մեր օրերը: Ընդարձակ տեղեկություններ կան նաև XVIII դարի լեհարենակ հայերի մասին: Ռեյխմանը մանրամասնորեն գրում է ինչպես Հեհաստանի արևելագիտությանը զբաղվող հիմնարկների, գիտնականների, այնպես էլ արևելագիտական մենագրական ու պարբերական հին և նոր հրատարակությունների մասին: Հոգվածագիրը խոսում է նաև արևելյան արվեստի բազմաթիվ ունիկումների, արևելյան հագարավոր ձեռագրերի, ինչպես նաև Կրակովի ու Վարշավայի արխիվներում պահպանված բազմաթիվ փաստաթղթերի մասին:

«Հանդեսում» տպագրված Հ. Ճ. Սիրունու «Նիկոլայ Միլեսկուն և նրա գերը հայերի և Պետրոս Մեծի հարաբերությունների հարցում» վերնագրով հոդվածը (Լջ 207—216), որտեղ հեղինակը գրում է, թե «Հայ ժողովրդի ազատագրական փորձերը և ողու ժողովրդի գերը» աշխատության պատրաստման կապակցությամբ իր ուսումնասիրած փաստաթղթերում հաճախ հանդիպել է մի գիվանդների և գրողի անվան, որը կարևոր դեր է խաղացել հայերի և Պետրոս Մեծի հարաբերությունների գործում: Լրացուցիչ հետազոտությունների շնորհիվ նա հաստատել է, որ այդ անձնավորությունը հենց Նիկոլայ Միլեսկուն է: XVIII դարի սկզբում Մոսկվայում տեղի ունեցած ուս-հայկական բանակցություններում Միլեսկունի կատարած կարևոր դերը պարզաբանելու նպատակով Հ. Ճ. Սիրունին համառոտակի մի ակնարկ է գրում նաև այն հանգամանքների վրա, որոնցից զրգված հայ պատվիրակությունը զնաց Ռուսաստանի մայրաքաղաքը, Ռուսաստանի օգնությունը փնտրելու՝ օտար լծից իր երկրի ազատագրման համար:

Հեղինակը մանրամասն կանգ է առնում Խորայի Սուրբ Գործունեության վրա, որը շրջագայում էր Սվրոպայում և ի վերջո 1701 թ. հուլիսին մեկը նրան տեսնում ենք Ռուսաստանում՝ Սվրոպայի մեծ տերությունների ղեկավարներից վերցրած հանձնարարական-նամակներով: Բազմաթիվ նիստեր են գումարվում, որոնց մասնակցում են գլխավորապես Րուսյան Սուրբ Նիկոլայ Միլեսկուն և մի քարտուղար՝ Մարսիմ Ալեքսեևը՝ ղեկավարների բաժանմունքի կողմից նշանակված: Այդ նիստերը չեն սահմանափակվում միայն հայկական պատվիրակության առաջարկությունները և հայտարարությունները թարգմանելով, այնտեղ բնարկվում են և վիճարանության առարկա են դառնում քաղաքական բնույթի հարցեր: Նիկոլայ Միլեսկուն հենց սկզբից էլ մասնակցում

է այդ հանդիպումներին: 1702 թ. մարտի 11-ին Նիկոլայ Միլեսկուն ղեկավարների բաժանմունքի կարգադրությամբ ներկայանում է Իսրայել Օրիին ու Միխայ Վարդապետին և ցարի կողմից նրանց հաղորդում, որ Շվեդիայի դեմ պատերազմը հաջողությամբ ավարտելուց հետո, ցարը պիտի զրազվի այն հարցերով, որոնց համար Օրին ուղարկված էր: Ը. Ն. Սիրոմին եզրակացնում է, որ Միլեսկուն գործոն դեր է խաղացել հայ պատվիրակների և ոռոսական իշխանությունների հետ առաջին հանդիպումներում և իր մասն ունի հայ և ոռոս ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում, այդպիսով նպաստելով հայ ժողովուրդի ազատագրական շարժմանը: Ինքն էլ լինելով օտարի լծի տակ ճնշված ժողովուրդի գավակ՝ Նիկոլայ Միլեսկուն շատ լավ էր հասկանում հայ ժողովուրդի տառապանքները և նրանց վերջ տալու համար թափված ճիգերի նշանակությունը: Հեղինակը ցույց է տալիս, որ Միլեսկուն գործակցությունը չի սահմանափակվել միայն պարզ թարգմանչի շրջանակներում, նրա դերը շատ կարևոր էր հայ պատգամավորության և ոռոս կառավարողների միջև տեղի ունեցած բանակցություններում: Լեյսպիսով, հայ ժողովուրդի ազատագրական շարժման պատմության տվյալ շրջանում Միլեսկուն հանգես է գալիս որպես հայկական հարցի փորձառու պաշտպան և անկեղծ բարեկամ: Հոգվածի հեղինակը լայնորեն օգտագործել է նաև հայ և ոռոս հեղինակների աշխատությունները:

Ի. Լ. Պոպեսկուն հանգես է եկել կարճ, սակայն շահեկան մի հաղորդագրությամբ՝ «1719 թվակիր ոռումինա-հայկական գրական մի փաստաթուղթ» խորագրով (էջ 246—247): Հոգվածագիրը նշում է, որ Կերլա քաղաքը հին գրություններում հայտնի է նաև Լեռնենպոլիս անունով, ունի հայերեն փաստաթղթերի չափազանց հարուստ և արժեքավոր հավաքածու: Եւրջ 1700 թ. Կերլա հասած հայերը ծաղկուն կյանք են ապրել և սերտ կապեր են հաստատել իրենց ոռումինացի և հունգարացի համաքաղաքացիների հետ: Կերլա քաղաքի թանգարանում պահվում են արժեքավոր ձեռագրեր, որոնք լույս են սփռում Կերլայի հայ հասարակության ապրած կյանքի և ուրիշ ժողովուրդների հետ նրա հարաբերությունների հարցի վրա: Հեղինակը նշում է նաև, որ կան եզակի արժեք ներկայացնող ձեռագրեր. թանգարանի անգնահատելի արժեք ներկայացնող հայերեն այլ գրչագրերի կողքին գտնվել է մի ձեռագիր, որտեղ ոռումիններն երկու բանաստեղծություններ գրված են հայերեն տառերով: Փաստաթուղթը վերաբերում է XVIII դարի սկզբին, այսինքն այն ժամանակաշրջանին, երբ հայ բնակչությունը հենց նոր էր հաստատվում այդ

վայրում: Լեյզ և ուրիշ ձեռագրերի գոյությունը հիմք է ծառայել հեղինակին եզրակացնելու, որ նախ՝ Կերլայում և շրջակայքում գոյություն է ունեցել ոռումին բնակչություն, որի արվեստը և գրականությունը գտնվել են ծաղկման վիճակում, երկրորդ՝ քաղաքի բնակիչների մի մասը խոսում էր երկու լեզուներով, և երրորդ՝ մշակութային սերտ կապեր են գոյություն ունեցել ոռումինացիների և հայերի միջև: Վերոհիշյալ ձեռագիրը բաղկացած է չորս էջից, բանաստեղծությունների վերնագրերը հայերեն են, իսկ ընթերցող՝ հայատառ ոռումիներեն: Հոգվածում ձեռագիրը քննարկվում է նաև ոռումիններին լեզվի ուսումնասիրության տեսակետից:

Ժողովածուի արժեքավոր նյութերից է նաև Գուրոթեա Սասու-Յիմերմանի «Հազար ու մի գիշերներ» ոռումին գրականության մեջ հոգվածը (էջ 103—104), որտեղ հեղինակը քննարկում է «Հազար ու մի գիշերներ»-ի պատմությունը: ստեղծման ու տարածման հարցը: Հոգվածագիրը նշում է, որ այդ պատմվածքները ստեղծվել են հեռավոր շնչկաստանում, որտեղից նրանք տարածվել են Պարսկաստան, Լեւոսիա ու Սեփյուտոս, այնուհետև նրանք թափանցել են Սփրսպա Սասու-Յիմերմանը ցույց է տալիս, թե ինչպես այդ բոլոր պատմվածքները ձեռագրերի, տպագրված գրքերի, ինչպես նաև պարբերական հանդեսների և թերթերի միջոցով թափանցել են ոռումինական գրականության մեջ: XVIII դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը:

Բանասիրական, պատմական ու գրական շահեկան հոգվածներ, բանավեճեր և հաղորդումներ ունեն նաև Գ. Բ. Ֆլորեսկուն, Բ. Բովանեսկուն, Միհայիլ Գուրոդյուն, Լ. Գուցուն, Բ. Տիմուշը և ուրիշներ:

Լեռնենպոլիսում վերցրած հանդեսի հիշյալ համարը, իր նախորդի նման, բազմաթիվ արժեքավոր նյութեր է պարունակում արևելագիտության զանազան ճյուղերի վերաբերյալ (հնդկագիտության, արաբագիտության, եղիպագիտության և այլն):

Հանդեսի «Հաղորդումներ և մատենագիտական ծանոթություններ» բաժնում գրախոսված են չորս 30 արևելագիտական ամսագրեր և գրքեր, որոնց թվում նաև հայագիտական հրատարակություններ (Սիրարփի Տեր-Ներսեսյանի «Հայաստանը և Բյուզանդական կայսրություն» աշխատությունը, «Բազմափայլ» 1957 թ. 1—12 համարները և այլն): Գրախոսականներն ստորագրել են ինչպես ոռումին խոշոր արևելագետներ (Միհայիլ Գուրոդյուն, Ն. Ֆելզման և ուրիշներ), այնպես էլ հայ հեղինակներ (Լեռնա Ֆրենկյան, Դավիթ Ղաթիկյան և ուրիշներ):

Ը. ՄԵՔԵՐՅԱՆ